ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Իջևան *« 25 » փետրվար 2022 թ.*

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Անուշավան Մակարյանի, (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ), մի կողմից և «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ը, ի դեմս տնօրեն Սյուզաննա Պետրոսյանի, (այսուհետ՝ ՀԿ), մյուս կողմից, (միասին հիշատակելիս՝ Կողմեր), կարևորելով զբոսաշրջության ոլորտի զարգացումը ՀՀ Տավուշի մարզում, կնքեցին սույն Համագործակցության Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հուշագրի առարկան Կողմերի միջև բազմակողմանի համագործակցությունն է:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Սույն համագործակցությամբ Կողմերը նպատակ են հետապնդում նպաստել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում զբոսաշրջության ոլորտի կայուն զարգացմանը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **ԵՊՀ ԻՄ-ն սույն Հուշագրի շրջանակում՝**

3.1.1. ՀԿ-ին տրամադրում է ԵՊՀ ԻՄ տարածքը և գույքը համատեղ միջոցառումներ կազմակերպելու համար:պ

3.1.2. ՀԿ-ի հետ համատեղ իրականանցնում է զբսաշրջության ոլորտի գիտահետազոտական և կրթական նախագծեր:

3.2. **ՀԿ-ն սույն Հուշագրի շրջանակում՝**

3.2.1. Իր կարողությունների սահմաններում աջակցում է ուսանողների մասնագիտական գործնական ուսուցումը կազմակերպելուն՝ ապահովում է անհրաժեշտ պայմաններ (ուսանողների մասնագիտական պատրաստվածության բարձրացման, հմտությունների և կարողությունների ձեռքբերման և զարգացման համար), ԵՊՀ ԻՄ-ի հետ միասին սահմանում է գործնական ուսուցման ընթացքում ուսանողի կողմից անցկացվող մասնագիտական պրակտիկայի բովանդակությունը,

3.2.2. Նպաստում է ԵՊՀ ԻՄ-ի գործունեության լուսաբանմանը և ճանաչելիության բարձացմանը,

3.2.3. Նպաստում է մարզային նշանակության զբոսաշրջության զարգացման ծրագրերի իրականացման ժամանակ ԵՊՀ ԻՄ-ի մասնակցության ապահովմանը:

3.2.4. Զբոսաշրջային արդյունքների մշակման աշխատանքներում ներգրավում է ԵՊՀ ԻՄ-ի ուսանողներին (որպես կամավորներ) և պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ ըստ անհրաժեշտության:

3.2.5. ԵՊՀ ԻՄ-ին աջակցում է մտավոր ներուժի կարողություններով:

3.3. Կողմերը պարտավորվում են պահպանել միմյանց՝ համագործակցության շրջանակում հայտնի դարձած առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4.1. ԵՊՀ ԻՄ-ն իրավունք ունի՝

4.1.1. ՀԿ-ում իրականացնել վերահսկողություն սովորողների մասնագիտական գործնական ուսուցման ընթացքի նկատմամբ,

4.1.2. ՀԿ վերապատրաստման գործուղել մասնագիտական դասընթացների մանկավարժներին՝ ըստ անհրաժեշտության,

4.1.3. ՀԿ-ի հետ մշակել ՀԿ-ի կողմից ԵՊՀ ԻՄ-ի ճանաչելիության բարձրացման ռազմավարությունը,

4.1.4. ՀԿ-ի հետ որոշել ԵՊՀ ԻՄ-ի մասնակցությամբ մարզային նշանակության զբոսաշրջային արդյունքների բովանդակությունը,

4.1.5. Առաջարկել ՀԿ-ի հետ համատեղ գիտահետազոտական նախագծերի իրականացման թեմաներ:

4.2. ՀԿ-ն իրավունք ունի՝

4.2.1. Առաջարկել ուսուցման ավարտից հետո սովորողին ՀԿ-ում պահելու հնարավորության մասին,

4.2.2. ԵՊՀ ԻՄ-ի հետ համատեղ մշակել ՀԿ-ի կողմից ԵՊՀ ԻՄ-ի ճանաչելիության բարձրացման ռազմավարությունը,

4.2.3. ԵՊՀ ԻՄ-ի հետ որոշել ՀԿ-ի մասնակցությամբ մարզային նշանակության զբոսաշրջային արդյունքների բովանդակությունը,

4.2.4. Առաջարկել ԵՊՀ ԻՄ-ի հետ համատեղ գիտահետազոտական նախագծերի իրականացման թեմաներ:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն համաձայնագրի կնքման և կատարման հետ կապված կողմերի միջև փոխհարաբերությունները բնութագրվում են միմյանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ վստահության, ինչպես անձանց, որոնք ի վիճակի են լավագույնս ապահովել սույն համաձայնագրի նպատակների իրականացումը:

5.2. Սույն համաձայնագրի նպատակների իրականացման հետ կապված Կողմերի միջև բոլոր ծանուցագրերը, հարցումները կամ հաստատումները ուղարկվում կամ տեղում կազմվում են գրավոր՝ պատշաճ կերպով և ստորագրվում են լիազորված անձանց կողմից:

5.3. Կողմերը հավաստում են, որ սույն համաձայնագրի կնքման պահին նրանց հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով իրենք իրավասու կամ ի վիճակի չեն կնքել կամ կատարել սույն հուշագիրը:

5.4. Կողմերը հաստատում են նաև, որ սույն համաձայնագրի կնքումը և կատարումը լիովին համապատասխանում է իրենց շահերին, ինչպես նաև չի վնասում համբավին:

5.5. Կողմերի անվանման, գտնվելու վայրի փոփոխման դեպքում նրանք պարտավոր են մեկ շաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

5.6. Համաձայնագրում լրացումներ և փոփոխությունները կատարվում են գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

5.7. Սույն համաձայնագիրը Կողմերի համաձայնությամբ կարող է ժամկետից շուտ դադարեցվել, այդ մասին մյուս կողմին ծանուցելով առնվազն մեկ ամիս առաջ:

5.8. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.9. Բոլոր այն հարցերը, որոնք նախատեսված չեն սույն համաձայնագրով, կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

5.10. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով և կնքվում է երկու հավասարազոր օրինակից:

5.11. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

ԵՊՀ ԻՄ	**ՏՄՏԶԳ ՀԿ**
«Երևանի պետական համալսարան»	«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման
հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ	գործակալություն» ՀԿ
ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան	ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան,
Ուսանողական 3	Սահմանադրության 1
ՀՎՀՀ՝ 01506928	ՀՎՀՀ՝ 07616661
Տնօրենի պաշտոնակատար՝	Տնօրեն՝
Ա. Մակարյան	Ս. Պետրոսյան

ստորագրություն

Կ.Տ.

ստորագրություն

Կ.Տ.